ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՄՆ-Ի ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ XX Դ. ՍԿԶԲԻՆ ԸՍՏ Դ. ՄԵՅՋԻ ԶԵԿՈՒՅՑՄԱՆ

ԱՄՆ-ի Փրինսթոնի համալսարանի պրոֆեսոր Դեյվիդ Մեյջիի անունը քաջ հայտնի է անտիկ պատմության մասնագետներին։ Նրա բազմաթիվ հոդվածները նվիրված են Հռոմեական տերության և հարակից ժողովուրդների պատմության տարբեր հիմնահարցերին, իսկ Փոքր Ասիայում հռոմեական տիրապետության պատմության մասին երկհատոր ծավալուն մենագրությունն առ այսօր չի կորցրել իր գիտական նշանակությունը։

Սակայն մասնագետներից անդամ քչերին է հայտնի, որ դեռևս դարասկզբին ապագա անվանի գիտնականը սերտորեն առնչվել է հայ ժողովրդի ճակատագրի հետ կապված հարցերին։

Տակավին երիտասարդ գիտնականը 1919 թ. ԱՄՆ-ի Պատմական ասոցիացիայի ամենամյա ընթերցումներին հանդես է եկել հետաքրքրական և իր ժամանակին խիստ արդիական զեկուցումով. Հռոմի քաղաքականությունը Հայաստանում ու Անդրկովկասում և դրա նշանակությունը»[*]*։*

Դ. Մեյջիի զեկուցումը հնագույն պատմության ուսումնասիրման արդիական նշանակության ցայտուն օրինակ է։ Եվ դա պատահական չպետք է թվա, եթե հաշվի առնենք դարասկզբին ստեղծված համաշխարհային քաղաքական իրադրությունը և հայ ժողովրդի ծանր դրությունը։

Առաջին աշխարհամարտից հետո Անտանտի հաղթանակած տերությունները ձեռնամուխ եղան պարտվածների տարածքներն իրար մեջ ազդեցության ոլորտների բաժանելուն։ ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի նախաձեռնությամբ ստեղծված Ազգերի լիգան կոչված էր կանխելու հետագա պատերազմները և օրինականացնելու այդ բաժանումը։ Համաշխարհային մասշտաբներ ընդունած այս գործընթացի մեջ ներքաշվեց Սեծ եղեռնից աշխարհասփյուռ հայ ժողովուրդը (և Հայաստանի Հանրապետությունը)։

Նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունն իր հետագա գոյության երաշխիքներն ապահովելու համար ստիպված էր որոնել մեծ տերություններից որևէ մեկի հովանավորությունը։ Այս հարցը Փարիզի հաշտության կոնֆերանսում բարձրացրեց Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ Ավ. Ահարոնյանի գլխավորությամբ։

Հայկական հարցը քննարկվեց Փարիզի հաշտության կոնֆերանսի բոլոր զեկավար մարմիններում։ Ի սկզբանե Հայաստանի մանդատը ստանձնելու հակում դրսևորեց ԱՄՆ-ի այն ժամանակվա պրեզիդենտ Վ. Վիլսոնը։ Դրա ապացույցն է այն, որ դեռևս 1919 թ. հուլիսին Հայաստանում Անտանտի տերությունների գերագույն կոմիսար նշանակվեց ամերիկյան գնդապետ Հաակելը, իսկ ապա Հայաստան այցելեց ամերիկյան գեներալ Հարբորդի միսիան։ Այս ժամանակ էր, որ ԱՄՆ-ում ստեղծվեցին «Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն» գեներալ Ջերալդի գլխավորությամբ, ինչպես նաև Հայաստանին բարեգործական օգնություն ցույց տվող կազմակերպությունները։

1920 թ. ապրիլին դաշնակիցների Սան-Ռեմոյի կոնֆերանսը պաշտոնապես դիմեց ԱՄՆ-ի պրեզիդենտ Վ. Վիլսոնին՝ ստանձնելու Հայաստանի մանդատը և հանդես գալու որպես միջնորդ՝ նրա սահմանների վերջնական ճշման հարցում։ Վ. Վիլսոնը տվեց իր համաձայնությունը և 1920 թ. մայիսի 15-ին Փարիզի կոնֆերանսի մասնակիցների կողմից պաշտոնապես վավերացվեց Հայաստանի մանդատի հանձնումն ԱՄՆ-ին։ Ընդ որում, Վ. Վիլսոնի գծած Հայաստանի քարտեզն ընդգրկում էր Արևմտյան Հայաստանի տարածքների մեծ մասը և նախատեսում էր ելք դեպի Սև ծով։

Հայաստանի Հանրապետության և նրա սահմանների պաշտոնական միջազգային ճանաչումը ձևակերպվեց 1920 թ. օգոստոսի 10-ին՝ Թուրքիայի հետ կնքված Սևրի հաշտության պայմանագրով։

---

* D. Magie, Roman Policy in Armenia and Transcaucasia and its Significance.— In: Annual Report of American Historical Association for 1919.—Washington: Government Printing Office, 1923, vol. I, p. 295—304.

Բայց մինչ այդ քաղաքական իրադրությունն արմատապես փոխվեց։ ԱՄՆ-ում պրեզիդենտ Վ. Վիլսոնի քաղաքականությունը չստացավ իշխող խավերի օժանդակությունը, և ԱՄՆ-ի սենատը 1919 թ. նոյեմբերի 19-ին մերժեց վավերացնել Վերսալի հաշտության պայմանագիրը, իսկ 1920 թ. հունիսի 1-ին՝ Հայաստանի մանդատը ստանձնելու Ազգերի լիգայի առաջարկը։

Այս ամենի տխուր հետևանքը եղավ 1920 թ. աշնանը Թուրք-հայկական պատերազմը՝ հայ ժողովրդի նոր զոհերով, Հայաստանի տարածքային կորուստներով և ապա Հայաստանի խորհրդայնացումը։ Իսկ 1923 թ. Լոզանի կոնֆերանսում «Հայկական հարցը» «փակվեց», մինչև որ մեր օրերի իրադարձություններն այն նորից կյանքի կոչեցին։

Արդ, հիշյալ իրադարձությունների հետ ինչ կապ ունի Դ. Մեյջիի զեկուցումը և ինչպես արժեքավորել այն։

Արդեն իսկ այն փաստը, որ զեկուցումն ընթերցվել է 1919 թ. վաղ աշնանը, երբ ԱՄՆ-ում Վ. Վիլսոնի կողմնակիցների և հակառակորդների միջև թեժ պայքար էր ընթանում Ազգերի լիգա մտնելու և Հայաստանի մանդատն ընդունելու հարցում, վկայում է, որ Դ. Մեյջին իր հայացքներով պատկանել է առաջինների թվին, ինչը հասկացվում է զեկուցման ոգուց։ Իսկ այն, որ, հակառակ ընդունված կարգի, երբ տվյալ տարվա զեկուցումները ԱՄՆ-ի պատմական ասոցիացիան հրատարակում էր ամենաուշը հաջորդ տարին, Դ. Մեյջիի և մյուսների 1919 թ. կարդացած զեկուցումները, չդիտես ինչու, բոլոր կանոնների հակառակ հրատարակվել են միայն 1923 թ., այսինքն 4 տարի ուշացումով, հանգեցնում է այն համոզման, որ դա որոշակի քաղաքական ուժերի դիտավորության հետևանք է, որովհետև ժամանակին հրատարակվելով, այն չարող էր դրականորեն տպդել Հայաստանի մանդատի ընդունման հարցի վրա։

Պետք է կարծել, որ Դ. Մեյջին անձամբ ծանոթ է եղել պատմության պրոֆեսոր Վ. Վիլսոնի հետ, որը մինչև պրեզիդենտ ընտրվելը եղել է Փրինսթոնի համալսարանի ռեկտորը։ Ուստի էր այս զեկուցումը գրել է նրա խորհրդով կամ էլ պատվերով՝ փաստորեն ինչ-որ չափով արտացոլելով նաև Վ. Վիլսոնի տեսակետները Հայկական հարցում։

Չպետք է բացառել, որ Դ. Մեյջին կարող է եղած լինել 1919 թ. ամռանը Հայաստան ուղարկված գեներալ Հարբորդի 50 հոգիանոց միսիայի կազմում, որի նպատակն է ուսումնասիրել իրավիճակը տեղում, տալ երկրի ստրատեգիական նշանակության և բնական հարստությունների գնահատականը՝ ամերիկյան շահերի տեսանկյունից։ Քանի որ Դ. Մեյջին շատ աշխարհագրական վայրերի մասին խոսում է որպես ականատես, կարելի է նրա զեկուցումը համարել գեներալ Հարբորդի միսիայի զեկուցագրի մի հատվածը։ Այս զեկուցագրի հայտնաբերումը և գիտական արժեքավորումը այսօր կարևոր և տեղին կլիներ։

Հաշվի առնելով այս ամենը, և այն, որ Հայկական հարցը նորից քննարկման առարկա է դարձել ԱՄՆ-ի սենատում, Դ. Մեյջիի տվյալ զեկուցումը կարող է որոշակի հետաքրքրություն ներկայացնել ընթերցողների լայն շրջանակի համար, ստորև ներկայացնում ենք այն թարգմանարար։

Զեկուցումը թարգմանելիս ձգտել ենք պահպանել հեղինակի լեզուն և ոճը, հեղինակի ծանոթագրությունները։ Մեր կողմից տրված պարզաբանումները և լրացումները տրված են աստղանիշերով և փակագծերում։

Ա. Է. ԵԱԶԻԿՅԱՆ

ԴԵՎԻԴ ՄԵՅՋԻ

Հռոմի քաղաքականությունը Հայաստանում ու Անդրկովկասում և դրա նշանակությունը

Հռոմի և Հայոց թագավորության միջև հարաբերությունները սկիզբ են առնում Սցիպիոն եղբայրների Մագնեսիայի ճակատամարտում (190 թ. մ. թ. ա.) Անտիոքոս Մեծին հասցված պարտությունից։ Դրան հաջորդած Սելևկյան կայսրության արևմտյան մասի անջատմամբ Հայկական բարձրավանդակը և Արաքս գետի հովիտն ընդգրկող մարզերի սատրապները Հռոմեացիներին հպատակություն հայտնեցին և նրանցից ստացան արքայական տիտղոս[1]։*

* Դեռ մ. թ. ա. III դ. վերջին Անտիոքոս III Սելևկյանը գրավել էր Հայաստանի մեծ մասը, իր ստրատեգոսներ նշանակելով Ծոփքում՝ Զարեհին, Մեծ Հայքում՝ Արտաշեսին։

[1] Strabo XI, p. 528, 531f.

Արտաքսիասը*, այսպիսով, ճանաչվելով արևելյան մասի արքա, ընդարձակեց իր թագավորությունը՝ գրավելով շրջակա տարածքները, մինչև որ այն ընդգրկեց Հայկական բարձրավանդակի մեծ մասը։ Նրա մայրաքաղաքը Արտաշատն էր, ժամանակակից Երևանի մոտակայքում, այնտեղ, ուր Արաքսի հովիտը վերածվում է դաշտավայրի, որը ներկայիս հայերը հակված են համարելու մարդկության բնօրրանը։

Ինչևէ, արդեն Արտաքսիասի հետնորդներից Տիգրան Մեծն (95—55 թթ.) էր, որ Հռոմին ստիպեց ամրապնդել իր իշխանությունը Հայաստանի վրա։ Որպես հետևանք նրա իմպերիալիստական նկրտումների և իր աներոջ՝ Միհրդատ Պոնտացու հետ դաշինքի, նա կոնֆլիկտի մեջ մտավ հռոմեացիների հետ։ Պոմպեոսից կրած ջախջախիչ պարտությունից հետո **, նա հարկադրված էր Արտաշատ ներս թողնել հռոմեական կայազոր և հնազանդություն հայտնել հռոմեական զորավարին, իր թագը հանձնելով Պոմպեոսի ձեռքը, այն կրկին նրանից հետ ստանալով որպես Հռոմի նվեր։ Այս ժամանակվանից սկսած Հայաստանը հաջորդաբար հանդիսանում էր մերթ վասալ թագավորություն՝ կառավարվելով Արտաքսիասի տոհմի շառավիղների կամ էլ Արևմտյան Ասիայի անշեշտ թագավորություններից որևէ մեկի ռոմանականացած արքայազնի կողմից, մերթ էլ Հռոմից կախյալ պետություն՝ Պարթևստանի արքայի, կրտսեր որդու կամ եղբոր իշխանությամբ կառավարվող Հռոմի պրոտեկտորատ։

Ավելին, սրանից ոչ այնքան էլ տարբերվող փոխհարաբերություններ ձևավորեցին Հռոմի և Հայաստանից հյուսիս-արևելք ընկած թագավորությունների՝ Իբերիայի (որը համապատասխանում է ժամանակակից Թիֆլիսի շրջակա տարածքներին) և Ալբանիայի (որը ներառում է Կուր գետի ստորին ավազանը առ Կասպից ծովը) հետ։ Այս տարածքները նույնպես ասպատակվեցին Պոմպեոսի կողմից։ Նա պարտության մատնեց սրանց արքաներին, ստիպեց պատանդներ տալ և հաշտություն խնդրել[2], և նրանց անունները մտցրեց իր հաղթահանդեսի այն երկրների արքաների ցուցակի մեջ, որոնց ինքը նվաճել էր[3]։ Բոլոր դեպքերում, մի առ ժամանակ նրա ձեռքում էին Արմաստիկա և Սեուսամորա ամրոցները Թիֆլիսի մոտակայքում, որոնք իշխում էին ոչ միայն Կուրի հովիտը, այլև Դարյալի կիրճը[4]։

Պոմպեոսի քաղաքականությունը շարունակեց Անտոնիոսը***։ Արտավազդ II-ը (54—34 թթ.), Տիգրանի որդին և հաջորդը, կարգադրություն ստացավ զինվորներ տրամադրել Անտոնիոսի մ. թ. ա. 36 թ. Պարթևական արշավանքի համար, և Պ (ուբլիոս) Կանիդիոս Կրասոսը կրկին գրավեց Կովկասից հարավ գտնվող ամրոցները և Իբերիայի և Ալբանիայի արքաներին հարկադրեց դառնալ Հռոմի այսպես կոչված դաշնակիցներ[5]։

Արտավազդ (II)-ի որդու՝ Արտաշես (II)-ի (30—20 թթ.) ղահ բարձրանալով սկսվեցին Հռոմի և Պարթևստանի տևական խաղարդավանքները, որոնք այնքան մեծ դեր խաղացին Հայաստանում Հռոմի (վարած) քաղաքականության պատմության մեջ։ Հրաժարվելով առ Հռոմն ունեցած բոլոր պարտավորություններից, Արտաշես (II)-ը դաշինք կնքեց Պարթևստանի արքա Հրահատ (IV)-ի հետ և Հայաստանը կառավարեց պարթևական գերիշխանության ներքո։ Հռոմեական խարդավանքները, ինչևէ, անհետևանք չեղան։ Հրահատ (IV)-ին հորդորեցին լքել Հռոմի ապստամբած վասալին և հռոմեամետ խմբ-

---

* Այսինքն Արտաշես I-ը (189—160)։

** Այստեղ Դ. Մեյշին սխալվում է. Տիգրանի և Պոմպեոսի միջև ռազմական լուրջ գործողություններ չեն եղել, առավել ևս՝ «ջախջախիչ պարտություն»։

*** Դ. Մ ե յ շ ի ն բաց է թողնում մոտ 20-ամյա մի հատված, մասնավորապես Մարկոս Կրասոսի մ. թ. ա. 54 թ. Պարթևական արշավանքի հետ կապված դեպքերը։

[2] Plutarch, Pomp. 34—36; Dio XXXVII. 2—5.

[3] Appian, Mithridatica, 107.

[4] Strabo XI, p. 501; Dio XXXVII, 1.

[5] Strabo XI, p. 501; Plutarch, Antony, 34; Dio XLIX, 24.

բավորմանը Հայաստանում հարկադրեցին սպանել Արտաշեսին ու պատգամավորություն ուղարկել Օգոստոսի մոտ՝ խնդրանքով, որ Արտաշեսի եղբայր Տիդրանը, որը Հռոմում պատանդ էր*, ուղարկվի կառավարելու իր նախնիների թագավորությունը[6]։

Այսպիսով, Տիգրան (III)-ը թագադրվեց Արտաշատում մ. թ. ա. 20 թ.։ Թագադրման արարողությունը կատարեց Տիբերիոս Կլավդիոս Ներոնը**, Օգոստոսի խորթ որդին, և հռոմեական զինվորները ներկա էին հանդիսությանը[7]։

Հռոմի գերիշխանությունը Հայաստանի վրա, այսպիսով, հաստատվեց, և Հռոմում դրամներ հատվեցին «Հայաստանը նվաճված» մակագրությամբ[8]։

Օգոստոսի կառավարումը ներկայացնում է հարկադրված և երբեմն էլ հուսահատ ձեռնարկումների մի շարք՝ պահպանելու այս գերիշխանությունը։ Դրածո արքայազները հաջորդաբար, սկզբում Հայոց արքայատոհմից, ապա, երբ այն հանգավ, հարևան Մարական Ատրպատականի և Կապադովկիայի իշխողներից, հռչակվում էին Հայոց արքաներ՝ Հռոմի ողորմածությամբ։ Միաժամանակ Պարթևստանի արքաներն ավելորդ ոչ մի ջանք չէին գործադրում բորբոքելու դժվարություններ Հռոմի վասալի համար և Հայաստանը բռնակցելու Պարթևական կայսրությանը։ Մ. թ. ա. 20 թ. Տիբերիոսի կողմից իրագործված թագադրման արարողությունը 1 թ. կրկնվեց Գայոսի՝ Օգոստոսի թոռան, կողմից***, որը գործում էր որպես Հռոմեական կայսեր հատուկ ներկայացուցիչ։ Բայց Օգոստոսի կառավարման վերջին հռոմեական դրածոն արտաքսվեց Հայաստանից, և Հռոմից կախյալ արքա հաստատելու բոլոր հետագա փորձերը երևում է, ապարդյուն էին****։

Մյուս կողմից, Անդրկովկասում Օգոստոսի դիվանագիտությունն ավելի լավ արդյունքներ տվեց։ Կանիդիոս Կրասոսի՝ Իբերիայի և Աղվանքի արքաներին պարտադրված պայմանագրերը վերահաստատվեցին և այս արքաներն Օգոստոսի կողմից մտցվեցին իր բարեկամությունը հայցողների ցուցակի մեջ[9]։

Հայաստանը գերիշխանության տակ պահելու քաղաքականությունն ավելի հաջողությամբ շարունակեց Տիբերիոս (կայսրը)։ Պոնտացի արքայազն Զենոնը Արտաշատում Գերմանիկոսի կողմից թագադրվեց Հայաստանի վասալ[10]***** թագավոր, և նրա մահից հետո, մոտավորապես մ. թ. 35 թ. (Հայոց թագավորությունը շնորհվեց Միհրդատին՝ Հռոմի գաղնակից Իբերիայի թագավորի եղբորը[11]։ Զենոնի կառավարման ընթացքում Պարթևները Հայաստանի դեմ

---

* Տիգրան III-ը իր հոր՝ Արտավազդ II-ի ողջ ընտանիքի հետ (մ. թ. ա. 34 թ.) գերվել էր Անտոնիոսի կողմից, տարվել Ալեքսանդրիա, ապա Օգոստոսի հաղթանակից հետո, մ. թ. ա. 30 թ.՝ Հռոմ։

** Ապագա Տիբերիոս կայսրը (14—37)։

*** Օգոստոսի որդեգրված թոռը՝ Գայոս Կեսարը, 2 թ. դրավեց Հայաստանը և այնտեղ թագադրեց Արիոբարզան Մարին, որը հայերի կողմից չընդունվեց։ Ինքը՝ Գայոսը, մահացավ հայերից ստացած վերքից։

**** Բաց են թողնված մ. թ. ա. 8 թ.—մ. թ. 16 թ. դեպքերը և մոտ տասնյակի հասնող հայոց արքաներ։

***** Տիբերիոս կայսեր եղբորորդի Գերմանիկոսը ուղարկվեց Հայաստան և Արտաշատում մ. թ. 18 թ. հայերի համաձայնությամբ թագադրեց Հայոց արքա Պոնտացի արքայազն Զենոն-Արտաշեսին, որը մեծացել էր հայկական միջավայրում, գիտեր հայերեն, ծանոթ էր բարքերին ու սովորույթներին։

[6] Mon. Ancyranum, V, 24; Tacitus, Annals, II, 3; Dio XLIX, 24.

[7] Mon. Ancyr., V, 24—28; Suetonius, Tib. 9; Tacitus, Annals. II. 3; Dio, LIV, 9.

[8] Ekhel. Doktrina Numorum, VI. p. 98.

[9] Mon. Ancyr. V, 53.

[10] Tacitus, Ann. II, 56; Strabo XII, p. 556.

[11] Tacitus, Ann., VI, 32—33; Dio LVIII, 26.

ոչինչ չձեռնարկեցին, բայց նրա մահից հետո Պարթևստանի Արտավան III-ը դրավեց (Հայոց) թագավորությունը և նրա արքա հռչակեց սկզբնապես իր ավագ որդի Արշակին (34—36), ապա Միհրդատի կողմից նրա սպանությունից հետո, իր կրտսեր որդիներից մեկին՝ Օրոդեսին[12]։ Ինչևէ, ի վերջո նա հարկադրված էր արքա ճանաչել Միհրդատին*, Հայաստանը կրկին դարձավ Հռոմից կախյալ պետություն և Հռոմեական կայազորը տեղակայվեց Արտաշատից ոչ հեռու[13]։

Հռոմի գերիշխանությունը, սակայն, երկար չտևեց։ Միհրդատը տապալվեց իր եղբորորդու ձեռքով[14] և Պարթևական տիրակալ Վաղարշ I-ը Հայաստանը պահանջեց իր եղբայր Տրդատի համար։ Հետևանքը եղավ պատերազմը Հռոմի հետ։ Ներոնի կառավարությունը Դոմիտիոս Կորբուլոնին ուղարկեց Հայաստան։ Հայկական բարձրավանդակն ասպատակվեց և Արտաշատը գրավվեց։ Մեկ այլ ռոմանականացած արքայազն, ոմն Տիգրան** դրվեց թագավոր և հռոմեական կայազորը վերադարձվեց Գառնի[15]։ Նոր դրածոն, ինչևէ, իր թագավորությունում երկար չմնաց։ Վաղարշը, բորբոքվելով Տիգրանի անհիմն հարձակումից, կրկին իր եղբայր Տրդատին հռչակեց Հայաստանի թագավոր[16]։ Կորբուլոնն ակնհայտորեն Տիգրան (VI)-ի անձնական արժանիքների մասին մեծ կարծիք չունենալով և դրանք Պարթևստանի հետ պատերազմի վտանգներից բարձր չդասելով, մի շարք բանակցությունների մեջ մտավ, ձգտելով հայկական խնդրի դիվանագիտական լուծմանը։ Շատ ձգձգումներից հետո և չնայած Վաղարշի՝ Կորբուլոնի գործընկեր Պետոսին հասցրած պարտությանը*** , որը Կապադովկիայի կառավարիչն էր, ի վերջո համաձայնություն կայացվեց, որ Տրդատ Պարթևը պետք է լինի Հայաստանի արքա, բայց որպես Հռոմի վասալ։ Որպես այս համաձայնության (հետևանք), Տրդատը Հռոմեական ճամբարում Ներոնի արձանի առաջ, իր թագը գլխից վայր դրեց և ուղևորվեց Հռոմ՝ այն նորից ստանալու[17]։

Այսպիսով, Օգոստոսի քաղաքականությունը փոխարինվեց հայկական խնդրի նոր լուծումով՝ փոխհամաձայնություն Հռոմի և Պարթևստանի միջև։ Պարթև արքայազնը կառավարելու էր Արտաշատում, բայց որպես Հռոմի վասալ, և միայն Հռոմեական կայսեր կողմից ճանաչվելուց հետո։

Այս քաղաքականությունը պահպանվեց Փլավիոսյան կայսրերի օրոք, այսպիսով, խաղաղ գերիշխանություն պահպանեցին Հայաստանի նկատմամբ։ Իբերիան ևս հսկողության տակ էին պահում՝ Արմաստիկայում տեղակայված կայազորի շնորհիվ[18]։

(Հռոմեական) քաղաքականության մեջ ոչ մի փոփոխություն չեղավ մինչև Տրայանոսի կառավարման վերջը։ Այնժամ, ի պատասխան Պարթևստանի

---

* Միհրդատ Իբերը Հռոմի օգնությամբ Հայաստանը նվաճեց և կառավարեց 37—40 թթ., ապա աքսորվեց Կալիգուլայի կողմից, որը մտադիր էր Հայոց գահը հանձնել հայերին ընդունելի թեկնածուի։ Հետագայում Կլավդիոս կայսրը Միհրդատ Իբերին ազատեց և նշանակեց Հայոց արքա (43—51 թթ.)։

** Սա Տիգրան VI-ն է (60—63 թթ)։ Տիգրան V-ի (6 թ.) եղբորորդին, որը հեռավոր ազգակցական կապ ուներ Ներոնյան արքայատոհմի հետ։

*** Նկատի է առնվում Հանդեայի մոտ 63 թ. Պետոսի բանակի շրջապատումը և անձնատուր լինելը հայ-պարթևական զորքերին։

[12] Tacitus, Ann., VI, 33; Dio LVIII, 26; Josephus, Ant. Jud. XVIII, 2, 4.

[13] Գառնի ամրոցում, Tacitus, Ann., XII, 45, Strabo, XI, 529, այն գտնվում է Արաքսի վտակ Գառնի գետի ափին։

[14] Tacitus, Ann. XII, 44—49.

[15] Tacitus, Ann., XIII, 6—8, 39—41; XIV, 23—26; Dio LXI, 16.

[16] Tacitus, Ann., XV, 1—2; Dio LXII, 20.

[17] Tacitus, Ann., XV, 24—31; Dio LXII, 22—23.

[18] Ըստ մ. թ. 75թ. թվագրվող այստեղ գտնված մի արձանագրության. (C. I. L., III, 6052; and Cagnat, Inscr. Graec. ad Res Rom. pert. III, 133/.

տիրակալի՝ առանց Հռոմի համաձայնության Հայաստանում արքա նշանակելու փորձի*, Տրայանոսը պատերազմ հայտարարեց, ներխուժեց (Հայկական) բարձրավանդակ, պարթևական դրածոյին կարգադրեց թողնել երկիրը և Հայաստանը հայտարարեց Հռոմի պրովինցիա։

Անօրինական բռնակցման այս քաղաքականությունը վերացրեց Հադրիանոսը։ Մեկ անգամ ևս Հայաստանը ստացավ Պարթև թագավոր**, բայց Հռոմի գերիշխանության ներքո, և Ներոնի օրոք Կորբուլոնի կողմից սկսված փոխհամաձայնությունը շարունակվեց մ. թ. II դարի ընթացքում։ Անգամ պարթևների դեմ Լուցիոս Վերոսի և իր զորավարների մղած պատերազմը, որի ընթացքում Հայաստանը ասպատակվեց երկուսի՝ Հռոմի և Պարթեստանի կողմից էլ և Արտաշատն էլ ավերվեց, վերջնականապես չփոխվեց Հռոմի քաղաքականությունը։ Հռոմեական կայազորը տեղակայվեց նոր մայրաքաղաք Վաղարշապատում (այժմ էջմիածին)[19], որը կառուցվել էր հռոմեական զորավարի կողմից՝ փոխարինելու ավերված Արտաշատին***։ Հռոմեական կայազորներ, բացի այդ, տեղակայվեցին Սև ծովի արևելյան ծայրում, իսկ Իբերիայի և Ալբանիայի թագավորները շարունակեցին մնալ կախյալ վիճակում։

Հայաստանում Հռոմի վարած քաղաքականության տարբեր փոփոխությունների միջով պարզորոշ արտահայտվում է մի սկզբունք. Հայաստանը պետք է լինի Հռոմի գերիշխանության տակ և նրա արքան կարող է կառավարել միայն Հռոմի ողորմածությամբ։ Անդրկովկասում ևս իրագործվում էր նմանօրինակ քաղաքականություն։ Իբերիայի թագավորը պահվում էր մտերիմ հարաբերության մեջ, հանդիսանում էր դաշնակից, բայց, փաստորեն, կախվածության և նույնիսկ վասալական կախվածության մեջ էր։ Հռոմեական կայազորը տեղակայված էր Երևանի հարթավայրում, իսկ Իբերիայում Հռոմն իր ձեռքին էր պահում Արմաստիկա ամրոցը, վերահսկելով նաև Կուրի հովիտը, Դարյալի կիրճը։

Հարցն անխուսափելի է. ինչի՞ համար էր այս համառությունը՝ վերահսկելու այս տարածքները՝ Հայկական բարձրավանդակը և Արաքսի ու Կուրի հովիտները։ Ինչո՞ւ ուղարկել այդքան շատ զորավարներ և այդքան շատ բանակներ՝ պահպանելու այդ գերիշխանությունը։

Պատճառը չի կարելի գտնել երկրի բնական հարստության մեջ։ Ալեքսանդր (Մակեդոնացին), իհարկե, տեղյակ էր Հայաստանի լեռներում ոսկու հանքերի մասին[20]։ Բայց նա հաջողություն չունեցավ թանկարժեք մետաղի իր որոնումներում և չկա այլ հիշատակություն, որ որևիցե հետագա որոնումներ են կատարվել։ Արաքսի հովտի և ստորին Կուրի միջև ընկած լեռներում պղնձի հանքավայրերը կարծես թե բոլորն էլ անհայտ էին անտիկ շրջանում։ Եվ չնայած Հայաստանի հարթավայրերը հարուստ և բերքառատ են, ոչ մի փորձ չի կատարվել դրանք օգտագործելու որպես խաղողագործական արտադրության տարածք՝ Հռոմեական աշխարհի համար։

Ոչ էլ հռոմեացիների նպատակն էր պաշտպանել իրենց վարկն Արևելքում։ Դա չէր Հռոմի գործելակերպը՝ վատնել մարդկային և դրամական մեծ ռեսուրսներ՝ լոկ իր վարկը պաշտպանելու համար, ինչպես վկայում է Հռենոսի և Դանուբի սահմաններում կիրառված պահպանողական քաղաքականությունը։

---

* 113 թ. Պարթև տիրակալ Խոսրովը առանց Հռոմի համաձայնության Հայոց արքա Աշխադարի փոխարեն նշանակեց նրա եղբորը՝ Պարթամասիրին (113—114)։ Սա առիթ դարձնելով, Տրայանոս կայսրը՝ ներխուժեց Հայաստան։

** Երկուստեք համաձայնությամբ Հայոց արքա ճանաչվեց Վաղարշ I-ը (117—140)։

*** Դ. Մեյջին սխալվում է. Վաղարշապատը կառուցել է Վաղարշ I-ը։

[19] C. I. L., III, 6052.

[20] Strabo. XI, 529.

Ոչ էլ մյուս կողմից, դա ռազմական անհրաժեշտություն էր։ Ճիշտ է, Մոմզենը բացատրություն է դանում, պնդելով, որ Հայաստանն «իր դիրքով, ռազմական տեսակետից, մեծ տերությունների (Հռոմի և Պարթևստանի) համար մյուսի տարածքների վրա հարձակվելու հարմար դարպաս էր հանդիսանում»[21], ե այս տեսակետը լայն ճանաչում է ստացել։ Այն, ինչպես, փաստորեն չի ներդաշնակում իրականությանը։ Պարթևների կամ Սասանյան պարսիկների դեմ հռոմեական բոլոր հարձակումներից միայն երկուսն են ձեռնարկվել Հայկական բարձրավանդակով և ապա Արաքսի ափերով դեպի Պարսկական Ադրբեջան տանող ճանապարհով՝ մ. թ. ա. 36 թ. Անտոնիոսի, մ. թ. 232 թ. Ալեքսանդր Սևերոսի, և երկուսն էլ բացարձակապես անհաջող էին։ Հռոմեական բանակների մյուս բոլոր ներխուժումները ձեռնարկվում էին Տիգրոնի դեմ Հյուսիսային Միջագետքի ուղղությամբ։ Մյուս կողմից էլ պարթևները երբեք հռոմեական տարածքներ չեն ներխուժել Հայկական բարձրավանդակի և Վերին Եփրատի ուղղությամբ, բայց, սովորաբար, Մալաթիայից հարավ ընկած ուղիներով և մեծ կիրճով։ Պարզ ասած, Հայաստանը քիչ է օգտագործվել որպես «հարմար դարպաս»։

Ոչ առանց կարևորության էր, որ Տրայանոսը ձեռք բերելով նոր պրովինցիաներ՝ Մեսոպոտամիա, Ասորեստան և Բաբելոնիա մաքսատներ հիմնեց Եփրատի և Տիգրիսի վրա[22]։ Հավանաբար, անհիմն չի լինի ենթադրել, որ նման մաքսատուն էլ հիմնվել է Արաքսի վրա՝ Արտաշատի կամրջի մոտ։ Ինչպես էլ եղած լինի, այս կամուրջը մի անցում էր, որի անհրաժեշտությունն իրոք որ մեծ էր։ Նրանից արևմուտք ձգվում էր կարևոր մայրուղի, որը Հայկական բարձրավանդակի վրայով տանում էր դեպի Եփրատի վրա գտնվող Էրզրում և Իլիջա, ապա (այնտեղից էլ) Վերին Քիլիքիա Իրմակի վրա գտնվող Սատաղ, և հյուսիսակողմ՝ դեպի Տրապիզոն, կամ էլ արևմուտք՝ դեպի Փոքր Ասիա։ Սա այն ուղին էր, որ Կորբուլոնն օգտագործել էր իր բանակներին Սև ծովից պաշար մատակարարելու համար[23], և այն ուղին, որով Տրայանոսը 114 թ. ներխուժեց Հայաստան[24]։ Արտաշատից դեպի հարավ-արևելք մեծ մայրուղին ցած էր իջնում Արաքսի հովտով, ժամանակակից երկաթգծի ուղղությամբ[25]։ Մի ճյուղը գետի ուղղությամբ շարունակվում էր դեպի Կասպից ծով, մյուսը գնում էր դեպի Էկբատան-Համադան, որտեղից էլ քարավանային ճանապարհը Կասպիական դարպասների միջով տանում էր Հնդկաստան և Չինաստան[26]։

Էկբատանի և արևմտյան աշխարհի միջև երկու հնարավոր ուղիներ կային, որովհետև Հաքյարի և Զագրոսի լեռներն արդյունավետ արգելափակոց էին Իրանական լեռնաշխարհի և Տիգրիսի ավազանի միջև։ Սրանցից մեկը Զագրոսի լեռնացքով տանում է Խանիքինից այն կողմ, Դիալա գետի վերին հոսանքի ուղղությամբ։ Սա Ալեքսանդրի (Մակեդոնացու) ուղին էր։ Մյուս ճանապարհն անցնում էր Արաքսի երկայնքով, Հայաստանի միջով։ Առաջինը մնում էր պարթևական վերահսկողության տակ, քանի որ Տրայանոսից և Սևերոսից բացի, ոչ ոք չփորձեց տիրանալ Տիգրիսի ավազանին։ Իսկ վերջին (ուղին) վերահսկվելու էր այն ուժի կողմից, որը ձեռքին էր Արտաշատ և դեպի արևմուտք ընկած բարձրավանդակը։ Երևանի դաշտավայրի ու Հայկական բարձրավանդակի առևտրական և ֆինանսական առավելություններն ակնհայտ են։ Բայց և այնպես, այս մայրուղին էլ հռոմեացիները երբեք չէին կարող հուսալ վերահսկելու։ Քանի դեռ պարթևների ձեռքին էր

---

21 Provinces of the Roman Empire, II, 337.

22 Fronto, Princ. Hist., p. 209N; cited by Mommsen, Provinces, II, p. 75.

23 Tacitus, Ann. XIII, 39, 1.

24 Dio-Xiphil., LXVIII, 18—19.

25 Tab. Peuting., Sec. X; Miller K. Itineraria Rom., p. 654f.

26 Tab. Peuting., Sec. X; Miller K. Itin. Rom., pp. 781f. and 792f.

Էկբատանը, նրանք կարող էին առևտրական փոխադրումները շեղել դեպի Խանիքինի ճանապարհը, Արտաշատ տանող ճանապարհից հեռու։ Մյուս կողմից էլ, Իբերիան ընձեռում էր Արևելքի հետ հաղորդակցության այլ հնարավորություն, պարթևների կամ պարսիկների կողմից անխափանելի առևտրական մի ուղի։ Դեռևս մ. թ. ա. III դարի սկզբին Պատրոկլեսը, գործելով Անտիոքոս I-ի հրամանով, ուսումնասիրեց Կասպից ծովը և զեկուցեց կարևոր առևտրական մի ուղու գոյության մասին, որը Հյուսիսային Հնդկաստանից տանում էր դեպի Օքս (Ամուդարյա) գետը, գետով դեպի վար, և այսպիսով դեպի Կասպից ծով կամ Օքս գետից դեպի Կասպից ծովը տանող ջրանցքի կամ էլ գետից դեպի ծովը տանող ինչ-որ ցամաքային ուղու (միջոցով)[27]։ Հետո ապրանքները նավերով Կասպից ծովով և Կուր գետով դեպի վեր անցկացվում էին մինչև նավարկելիության սահմանը։ Այս կետից դրանք Թիֆլիսի և Արմաստիկայի ճանապարհով տարվում էին մինչև Սև ծով[28]։ Այս ուղին ևս ուսումնասիրվել էր Պոմպեոսի կողմից, որը Հայաստանի և Իբերիայի նկատմամբ Հռոմի վերահսկողությունն ապահովող քաղաքականության հիմնադիրն է։ Նրա հետախուզական ջոկատը հաստատեց, որ յոթ օրում քարավանը կարող է Հնդկաստանից հասնել Օքս գետի նավարկելի վտակին։ Այստեղից բեռները կարող են նավերով ուղարկվել Կասպից ծով և այնտեղից էլ Կուր գետով մինչև Սև ծովից հինգ օրվա անցումով հեռու գտնվող վայրը[29]։

Իբերիայի վերահսկողությունը, այսպիսով, ապահովում էր առևտրական այն ուղու արևմտյան մասի վերահսկողությունը, որը Սև ծովի և Անդրկովկասի վրայով տանում էր դեպի Կուրի գետաբերան, այնտեղից էլ Կասպից ծովով դեպի Վերին Օքս։ Օքս գետի վերին հովտից ճանապարհը տանում էր Մերվի ուղիով Պարոպամիսի լեռնաշղթայի միջով դեպի Հերաթ[30], հավանաբար համընկնելով ներկայիս ճանապարհին։

Համենայն դեպս Հնդկաստան տանող ամենակարճ ուղին Օքս գետից Հինդիկուշ լեռնաշղթայի վրայով, հավանաբար Խավաքի միջոցով[31] տանում էր Ալեքսանդրիա Հինդիկուշում, որը ըստ Պլինիոսի[32] գտնվում էր Օրտոսպանայից՝ ներկայիս Քաբուլից 50 մղոն հեռու։ Օրտոսպանան Հերաթից, Բակարայից ու Հնդկաստանից եկող ճանապարհների խաչմերուկն էր[33]։ Հինդիկուշյան Ալեքսանդրիայից և Օրտոսպանայից լավ հայտնի ուղիները տանում էին դեպի Ինդոսի ավազանը[34]։

Օքս գետի հովիտը նաև դեպի Չինաստան տանող առևտրական ուղիների սկզբնակետն էր, որով անցնում էին դեպի արևմտյան աշխարհը մետաքս բերող քարավանները[35]։ Մ. թ. ա. I դարում Բակտրիան դարձավ մետաքսի

---

27 Անտիկ պատմիչները կարծես թե հավատում էին, որ Օքսը (Ամուդարյա) թափվում է Կասպից ծով, և մինչև վերջերս գետի ստորին հոսքի և Կասպից ծովի միջև եղած իշվածքը համարվում էր Օքս գետի նախկին հունը։ Այժմ, մեծ մասամբ համարվում է, որ Կասպից ծովն անտիկ շրջանում տարածվում էր ավելի Արևելք, քան ներկայումս, անհնարին չէ, որ Օքսը թափելիս լիներ արևմտյան ուղղությամբ։ Այս հարցի ամփոփումը տես P Kropotkin, Geogr. Journal, XII, (1898). p. 306—310.

28 Strabo XI, p. 509; cf. Pliny, N. H., VI. 58.

29 Pliny, N. H., VI, 52.

30 Tab. Peuting., Sec. XI; Miller K. Itin. Rom., p. 794f.

31 Թվում է, թե սա այն ուղին է, որն Ալեքսանդրն օգտագործեց իր հյուսիսակողմյան արշավանքում։ Տես՝ Arrian, Anab. Alex., III, 28—29.

32 Pliny, N. H., VI. 61.

33 Strabo XI p. 514 and XVII, p 723.

34 See' Ritter, Erdkunde II. p. 14..

35 Hermann A. Die alten Seidenstrassen zwischen China und Syrien, Berlin, 1910, S 5f.

մեծագույն շուկան։ Կարավանային ուղիները կենտրոնական Չինաստանից իրար էին միանում Կաշգարում՝ Չինական Թուրքեստանի հյուսիսարևելյան անկյունում։ Այստեղից չինական առևտուրը Պամիրի լեռներով անցնում էր Ամիանոս Մարկելինոսի հիշատակած Լիթինոս Պիրգոսի մոտով[6], և այդտեղից՝ Ֆայզաբադի ճանապարհով դեպի Օքս։

Այսպիսով, Օքսի հովիտն առևտրական մեծ մայրուղի էր, դրան որևէ կերպ մերձենալու արևմտյան աշխարհի միակ ուղին հնարավոր էր լոկ Կասպից ծովով և Անդրկովկասով, Կասպից և Սև ծովերի միջև եղած պարանոցին տիրելու դեպքում այս ուղու վերահսկողությունն անցնում էր Հռոմի ձեռքը։ Այսպիսով, Հռոմի գերիշխանությունը Հայաստանում և Անդրկովկասում պահպանելու քաղաքականությունը թելադրված էր ոչ թե ռազմական, այլ տնտեսական և առևտրական նկատառումներով։

XIX դարի Ռուսաստանը վերահսկողություն հաստատեց դեպի Հնդկաստան տանող ցամաքային ուղիների վրա։ Սկսելով 1801 թ. Վրաստանի կախյալ թագավորության անեքսիայով, նա Պարսկաստանի և Թուրքիայի հաշվին ընդարձակեց իր անդրկովկասյան տիրույթները, մինչև որ 1829 թ. ձեռք բերեց Փոթին Սև ծովի ափին, և նրա սահմաններն ընդարձակվեցին դեպի հարավ և արևելք մինչև Արաքս և Կուրի գետաբերանը[37]։ Այս մեծ պարանոցի վերահսկողությունն ամբողջացվեց 1878 թ. Բաթումի ձեռք բերումով։ Ի վերջո, 1907 թ. հայտնի անգլո-ռուսական համաձայնագիրը Ռուսաստանի համար ապահովեց ողջ Հյուսիսային Պարսկաստանի և դեպի Թեհրան տանող առևտրական ուղու վերահսկողությունը մինչև աֆղանական սահմանը։ Ռուսաստանի առաջխափանցմանը կրնկակոխ հետևեցին երկաթուղիները։ Թիֆլիսից Ալեքսանդրապոլ երկաթգիծը շարունակվեց Երևանից այն կողմ Արաքսի հովտով դեպի վար մինչև Պարսկական սահմանի վրա գտնվող Ջուլֆա և մոտավորապես 1914 թ. հասցվեց մինչև Թավրիզ, որտեղից էլ այն պետք է շարունակվեր դեպի Թեհրան։

Մինչև այդ, ինչևէ, դեպի Հնդկաստան մի այլ ուղի նախագծվեց Ռուսաստանի կողմից։ Սա ոչ այլ ինչ էր, եթե ոչ նախկին քարավանային ուղին՝ Կասպից ծովից Օքսի հովտով դեպի Հինդիկուշ լեռնաշղթան և այնտեղից դեպի Քաբուլ և Հնդկաստան։

1869 թ. ամրացվեց Կրասնովոդսկը Կասպից ծովի ափին։ Դրան հաջորդեց 1881 թ. ներկայիս Անդրկասպյան նահանգի արևմտյան մասի նվաճումը, և 1884 թ. Մերվի բռնակցումը։ Այսպիսով, ռուսական տիրապետությունը տարածվեց մինչև Օքս։ Այստեղ էլ բռնակցմանը հաջորդեց երկաթուղին։ Անդրկասպյան երկաթգիծը հիմնադրվել էր 1880 թ., 1886 թ. այն հասցվել էր մինչև Մերվ, իսկ 1895 թ. երկաթուղու մի ճյուղ կառուցվեց Մերվից դեպի աֆղանական սահմանի վրա գտնվող Կուշկա[38]։

Բրիտանական ռազմատյաններն այս գծի կառուցումն արժեքավորեցին որպես դեպի Հնդկաստան ռուսական առաջխաղացման մի կարևոր քայլ[39]։ Նրանք ընդգծում էին, որ դա անմիջականորեն հեշտացնում է (Հնդկաստան՝ ռուսական) ներխուժման հնարավորությունը, և ցույց էին տալիս որ Բաթում-Բաքու գծի միջոցով զորքերը կարող են Օդեսայից Մերվ փոխադրվել չորս կամ հինգ օրում, և որ (երկաթուղու) վերջին կանգառ Կուշկան Հերաթից ընդամենը 75 մղոն հեռավորության վրա է։ Այդպես է դա թե ոչ, բայց Անդրկասպիայի վրա տիրապետությունը ապահովում է Ռուսաստանի վերահսկողությունը Հնդկաստան տանող հյուսիսային ուղիների վրա։ Ճանապարհը Կուշ-

---

[36] XXII 6, 10.

[37] Quadflieg F. Russisch-Exkursionen, 1774—1911. Berlin, 1914, S. 112.

[38] Տարածությունը երկաթուղով Կրասնովոդսկից Կուշկա 753 մղոն է (Baedeker, Russia. 1914, p. 512).

[39] Curzon. Russia in Central Asia. London, 1889, p. 271.

կայից տանում է Հերաթ և այնտեղից դեպի արևելք՝ Քաբուլ կամ հարավ-արևելք՝ Ղանդահար[40], մինչդեռ մի այլ ուղի էլ է հնարավոր՝ Ջարջուից, որտեղ երկաթուղին կտրում է Օքսը, նավակներով գետով դեպ՝ վեր մինչև Կիլիֆ, և այնտեղից էլ Բալխի* ճանապարհով Հինդիկուշի վրայով դեպի Քաբուլ[41] համարյա համընկնելով հին առևտրական ուղուն։ Քաբուլից մինչև Փեշավար (քաղաքը) Փենջաբում, տարածությունն ընդամենը 172 մղոն է։

Անգլո-պարսկական վերջերս կնքված համաձայնագիրը կարծես թե բրիտանական վերահսկողությունը տարածում է Հերաթից դեպի անմուտք մինչև Արաքս և Հայաստանի սահմանը և հնարավոր է դարձնում Հնդկաստան հասնել Հյուսիսային Պարսկաստանով։ Այս հնարավորությունը կարելի է արևմտյան աշխարհի հետ կապել երկու ուղիներով. մեկը՝ Ջագրոսի լեռնանցքով, որը Համադանից Խանիքինի վրայով տանում է դեպի Տիգրիսի ավազան և Բաղդադի երկաթուղի, մյուսը՝ Հայաստանի միջով դեպի Սև ծով՝ Բաթում կամ Տրապիզոն, կամ էլ (Հայկական) բարձրավանդակը կտրելով դեպի Անտոլիա և Կոստանդնուպոլիս։

Միջագետքի նվաճումը Մեծ Բրիտանիայի համար ապահովում է Ջագրոսով (Հնդկաստան) հասնելու ուղու վերահսկողությունը, բայց Հայաստանի ապագա կարգավիճակը դեռևս որոշված չէ։ Այն ուժը, որը կվերահսկի այն, հռոմեացիների նման կվերահսկի տնտեսական և ստրատեգիական մեծ նշանակություն ունեցող մայրուղին և շահավետ դիրք կգրավի Մերձավոր արևելքում։

---

* Բալխը հնագույն Բակարան է։

40 Հերաթից Քաբուլ՝ 500 մղոն է։ Հերաթից Կանդահար՝ 389 մղոն է (Curzon, p. 418).

41 Կիլիֆից մինչև Քաբուլ Բալխի ճանապարհով 380 մղոն է (Curzon, p. 418).